

եմ թէ ջուրը ջերմութեան ո՞ր աստիճանին է եփ զալիս: Այս բանը դոքա չգիտեն, իսկ հաւատացնում են, թէ լու խոհարարութիւն զիտեն: — Խեղձ տիկինը «զիտութիւնների» ուսմամբ կորցրել էր «մտաւոր աշքը» և չէր կարողանում փորձով տեսնել խոհարարուհու արշեատը: Թղթերի զիտութիւնը գժուարացրել էր աւելի իրական և կարեռ ծանօթութիւնների ստացումը. հիմա եթէ տիկինը ինքն իրան մէնակ թողնուի, կարող ենք երեւակայել թէ իւր փիլիսոփայութիւնից, կաթսաներից և ջերմացափից ինչպիսի յեղափօխութիւններ յառաջ կուգան կերակուրների համի և մնագարարութեան մէջ:

Այսպիսի գեղքերի համար Սպէնսերն ասում է, մենք շատ ծշմարտութիւններ գիտենք, որ զիտութիւնից առաջ ենք սովորում զոր օր աննեցուկ մարմինը վայր կը նկնի, վառած ծրագը կը հանգչի՝ եթէ ջրի մէջ խոթենք, սառոյցը կը հալի՝ եթէ կրակի մէջ ձգենք, բորբռքած խարոյից ծուխ կը բարձրանայ, կրակից ջուրը եփ կու գայ՝ ասոնք բոլորը այնպիսի գուշակութիւններ են, որ աղախինն էլ իւր պարզ խելքով ճշգիւ կը դուշակի, ինչպէս և ուսումնականը: Բայց թէ լուսինը ե՞րբ կը խուարի — այս գուշակութիւնը աղախինի խելքի բան չէ: — Տաստանուարտ — մենք մեր ստացած ուսմամբ աղախինի չափ խելքը կորցնում ենք: բայց վազում ենք լուսնի յետեից: Միթէ, նախապաշտում չէ՝ այս յամառութիւնը:

Ս. Մ.

ԼՅԼ ԵՒ ԱՅԼՔ.

Փոքր Ասիայի թնակիներ. — Միւնխենի մարդագիտական ընկերութեան մէջ զր. Ցիմեները այդ նիւթի մասին հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդել. Ս. Գրոց ազգահամարի (Ծնունդք Փ.) Քանանի որդոց մէջ Հետիւներ (Քետացիք) անուանածները՝ կարեռ նշանակութիւն ունին Փոքր Ասիայի Շնագոյն պատմութեան համար. Մինչև 1500 ն. ք. Ծ. Ք. նոքա հաստատուած էին Կապաղովկիայում և վերին Որոնտէսի հովտից գեղ հարաւ-

չէին տարածուել: Եզիպտացւոց և Հետիւնների գըծագրած պատկերներում միշտ գտնում ենք սեմականներից խիստ որոշուող մի ազգ՝ անմիրուս և յատուկ ձևի մազերով: այն է՝ գոցա մազերն սեմականներից աւելի երկայն են և զլիսի վերայ հաւաքած են: ոչ մէ գնտացած, այլ երկայն ճառագայթիներովի իջած մինչև ուսերը: Զինուած են կովկասեան ազգերի պէս: Նոցա քիթը ձգուած է թեթևակի աղեղնաձեւ: Ճակատը՝ յետ քաշուած: այտերի ոսկրները՝ խոչոր, կրինակզակի՝ կարճ և բոլորակ: մազի գյոնը՝ խիստ բաց: Լուշանը գտնում է Զէնջիրլիի և Փոքր Ասիայի բոլոր ցեղերի քանդակագործութիւնների մէջ՝ նախական ժողովրդեան մի տիպ աւելի թիազըն գէմքերով: քան ինչպէս որ եզիպտական գունաւոր պատկերներումն են նկարուած: և աւելի բնական մազերով: միոյ բանիւ՝ հայկական ցեղական յատկութիւններով կամ՝ ինչպէս որ Լուշանը անուանում է՝ նախակապագովկեան կամ՝ արմէնսիդ կերպարանքը: Այս նախական տիպը նշյոնութեամբ ճանաչվում է (Հոմմէլի նկարագրած) սումերեան՝ ալարողեան տիպի մէջ, որ 4000—3000 տարի ն. ք. Ք. ժամանակներից մնացած բարելոնեան պեղուածներում յայտնուեցաւ: 1120 թօւականին ն. ք. Ք. այլ ևս գոյութիւն չունէր հետիւնեան մեծ պետութիւնը, Զէնջիրլիի հոյակապ քանդակագործութեանց մէջ արգէն լ. դարում սկսվում են երեւալ հին սեմական արձանագրութիւնները: Բարելոնի, Ասորեստանի, Մարաց և Պարսկաստանի ազգեցեան սահմանագիծը Փոքր Ասիայում պէտք է համարուի Հալիս գետը: Խոկ գետից այն կողմը Փոքր Ասիայի մերակզբին հաղիւ թէ իւր աւելի քան հազարամեայ գոյութեան միջոցին երբ և իցէ վարչական միութիւն կազմած լինի, այլ միշտ մի մեծ՝ այն ևս ծովապետական՝ իշխանութեան մի մա և եղել Յայտնի է, որ 600 թօւականներում Կիմրներ և Սկիւթացիք արշաւել են այդտեղ: Սակայն մարդագիտական տեսակէտից Փոքր Ասիայի ամենաշանառու ազգն է Հայոց ազգը (որին ասորեստանցիք կոչում են—ուրարտու: ս. Գիլլը՝ արարատ: իրանք անձամբ՝ խալիլինի): Նոցա պատմութիւնը մեզ ծանօթ է Ասորեստանի և բնիկ բնեաւագրութիւններից: Հայաստանի հնագոյն բնակիչները Հետիւներից խիստ տարբեր են իրանց լեզուով: որ պատկանում է ուրալ—ալտայեան լեզուների ընտանիքին: Կիմրների և սկիւթացիների արշաւանքի հետ ի միասին, ն. գարում Հայաստանի մէջ սրբուեցաւ մի նոր հնդիկ-գերմանական ազգութիւն, որ ոմանք գաղթած են համարում Թրակիայից և Փոփողիայից, իսկ ոմանք՝ Կիլիկիայից: — Քուրդերը իրանական ծագում ունին (Պարսիկների, Աւանների, Բելուջների հետ մի լնտանիք կազմելով), Մարդագիտական տեսակէտից նայելով, նոցա ցեղը այլ կայութիւններ է ներկայացնում: որ իրանց բազ-

մակնութիւնից հասկանալի է դառնում Սելջուկներից հալածուելով՝ գոքա յետ քաշուեցան դեպի Տաւրոս և Արևիկիա Արփական խումբ են կազմում նաև Կապաղովկացիք և Փոխւգիացիք. Օսմանները անխառն նոյնական տիպ չեն կազմում, նոցա մէջ մինչև իսկ արարի և նեղրի տիպ է պատահում:

* *

Աւդամների ծագումը. — Աւդանները աւանդութիւն ունին: թէ իրանք իսրայէլի կորած ցեղերի յաջորդներ են. Calcutta Review թերթը մի քանի նկատողութիւններ է անում, որով այդ զարմանալի աւանդութիւնը կարծես թէ հաստատութիւն է ստանում: Աւդանների սովորական անուններ են՝ Խւսուֆ (Յովսէփ), Եազուր (Յակոբ) և Խօհակ (Խսահակ). Արդի Աւդանները մինչև այսօր իրանց անունում են «Խորայէլի որդիք»: Հրէից պատմութիւնն էլ Աւդանների աւանդութեան չի հակասում: Այն տեղ ասուած է, թէ կորած տասը ցեղերը գաղթել են Մարաց աշխարհը և Միջագետք և տարիուկէս թափառելուց յետոյ՝ հասել են մի աշխարհ, որ Ասարոս էր կոչվում. Եթէ Ասարոսը իրօք Աւդանստան է Նշանակում, ապա մի քանի հանգամանքներ ինքնին բացատրվում են. Զրոյցի մէջ ասվում է, թէ մահմեդականութիւնը տարածուելուց շատ առաջ՝ հրէանները հին ժամանակներում բնակուած են եղել Թախտ-ի-Սուլէյման (Սոլոմոնի գահ) Լեռն վերայ. Աւդաններից մեծ մասը շատ հին պապենական անուն են կրում «Խւսուֆայիս»: որ նշանակում է Յովսէփի ծնունդ, այսինքն Խփրեմ և Մանասէ ցեղերի զաւակներ, Քաջի սորանից աւդանական հնաւանդ բարբերն ևս խրայէլական ծագումն են ցուցանում: Զոր օր, այն պատուերը, թէ պէտք է վախճանած եղար այրին կին առնուլ, կամ ամբարշտութեանց համար մահու պատիքը պիտի լինի քարկոծութիւն, Աւդանիստանի արձանագրութիւններից շատերը անհասկանալի են մնում, մինչև որ երայէրէնի հետ չհամեմատուին:

* *

Եղիպտոսի մի գիւտի մասին. — Յայտնի է, որ Կահիրէի հրէից հին ժողովրդանոցի փոշու տակ մնացած ձեռագիրների մէջ՝ գտնուել է կրկնագիր մագաղաթ (պալիմպսէտ), որի ջնջուածքը կամ տակի գիրը պարունակում է Ակիւզաս Պոնտացու Հին Կտակարանի յունարէն թարգմանութեան երկու կտորը: Այժմ իմանում ենք, որ այդ մագաղաթի ջնջուածքը այն թարգմանութեան առաջին երկարագոյն փորձն է եղել, որով յունարէն խօսող հրէանները եօթանասնից թարգմանութեան դէմ մրցել էին ուղում: Գտած կտորներից երկում է, որ այդ թարգմանութիւնը այնչափ ստրկական բառացի:

Եղել որ տեղ տեղ իսպառ անհասկանալի է դառնում: բնագրի և ոչ մի վանկ անուշաղիր չի մնացել, ամէն մի չնչին յօդ իւր յատուկ նշանակութեամբ ի հշիռ է առնուած և փոխադրուած: Այս թարգմանութեան մի ուրիշ առանձնութիւնն այն է, որ քառագիրները* (Աստուծոյ «Խաչվե» անունը) յատուկ կերպով է գործածուած: Այդ անունը Ակիւզասը ոչ բառացի է թարգմանել և ոչ բացայատ գարձուածքով է իմացրել, այլ պարզաբար օրինակել և արտօագրել է, այն ևս հին երայական տառերով ինչ ձևով որ հրէական հին գրամների վերայ և Սելջուկի արձանագրութեան մէջ պատահում են: Այս հին գրութիւնը, որ մինչ այսօր միայն վէմի կամ մետաղի մէջ զրոշմածներով էր յայտնի, այժմ առաջին անգամ ձեռագիր յիշատակարանի մէջ ենք գտնում:

* *

Պարդոսի կորած համարուած րդիւրը. — Հայդէլբերգի համալսարանը անցեալ տարի մի քանի պապիրուսի թերթեր է ձեռք բերել: Թէպէտ բաւական վնասուած, բայց այդ է գարում գրուած թերթերը, յանկարծակի լոյս սփռեցին հին քրիստոնէական գրուածքներից մէկին պատող խաւարի մէջ: Այսինքն պապիրուսը բովանդակում է զպտերէն լեզուով, բացի յայտնի թեկլայի թղթերից, նաև Պաւլոսի հին կորած համարուած՝ թղթերը, որոնց մասին մինչ այսօր միայն այնքան գիտենքի, թէ անոնք հին քրիստոնէական գրուածքների մէջ խիստ կարևոր նշանակութիւն են ունեցել: Առ այժմ հետազոտութիւնները ցոյց են տալիս, որ ոչ միայն թեկլայի թղթերը, այլ և առաջին անգամ 1644թ. հայոց մի ձեռագրում գտան Պաւլոսի և Կորնթացոց պարականոն թղթակցութիւնը՝ պարզապէս Պաւլոսի այդ թղթոց շարքի մի մասն են կազմած եղել, Պաւլոսի թղթերը շատ աւելի հին պէտք է համարել, քան թէ ծագած Յովհաննու աւետարանի ժամանակից, ինչպէս որ ենթագրում է Ցահնը, որ նոյն թղթերի առաջնակարգ նշանակութիւնը հոչակեց և անոնք համարեց պատութեան յիշատակարան կանոնական գրուածոց պատմութեան համար: Բացի սորանից այժմ ապացուցուելէ, որ Փաքր Ասիայի երկցներից մէկը նոր Կտակարանին իսկզբանէ կցած մի գրութիւն կեղծել է, և թէ այս կեղծութեան յայտնութիւնը կամ այն ժամանակներում չէ ընդհանրացել և կամ երկար ժամանակ կարեւորութիւն չի ստացել:

* Տիրագրամատառն է կոլլում յուրեցրեան, յառ առույլ դրած անոն Աստուծոյ, որովնետեւ այդ անունը յա լեզուների մէջ յոր գրով է ձեւանում (Արքա և իշկ, յուն. Թէ ուս, յա. Թէ ուս, մր. Դիես, սպ. Գիյոս, ցերմ. Գոսս, —եւ հայերէնի մէջ՝ Որ հետ, Հայր, Որդի, Հոդի):

Ալէքսանդրեան եկեղեցին զպտերենի թարգմանել տուեց յունաց բնագրից Պաւլոսի թղթերի իսկականը, որոնք ուրիշ ոչ մի տեղ այնչափ ամբողջութեամբ չեն պահպանուել. Աւսումնական աշխարհը մեծ ակնկալութեամբ պիտի սպասէ այս անգին գիւտի շարունակ արդիւնքներին և, մանաւանդ լեզուական տեսակէտից ևս խիստ շահագրդիռ՝ բնագրի հրատարակութեան:

* *

Գեղամայ լիի մկներ. — Զինարուծութեան և ձրկնորութեան ընկերութեան կովկասեան բաժնի նախագահ դր. Քադդէն՝ իմաստոլոգ Կովկասյկու հետ ի միասին՝ ձեռնարկել է կովկասեան ձկների մասին պատկերազարդ ուսումնասիրութիւն, որի երկրորդ հատորը նորերիս լոյս է տեսել և բովանդակում է Կովկասի կարմրամիտ ձկների ազգը (Salmonidae—լուղիներ, օրագուլ): Այդ երկը հրատարակում է Թագաժառանգ Մեծ իշխան Գէորգի Ալէքսանդրովիչի ծանիք, Հանգուցեալ պրոֆ. Կէսլերը Կառապից ծովի օրագուլ և Գեօքչի կարմրախայտերի գըլխաւոր երկու ձեւերը՝ իշխանաձուկն ու գեղաբըռունին՝ ջոկ ջոկ տեսակներ համարեց: Արդ Կովկասյկին՝ աստիճանական ձեւերը բազմից շափելով և համեմատելով՝ ապացուցանում է, թէ կասպեան օրագուլն ու Կովկասի գետերի ու լճերի կարմրախայտերը ոչ այլ ինչ են, բայց եթէ մի (Salmo trutta) հիմնական տիպարի փոփոխուած ձեւեր. Այդ բոլոր ձեւերի ներկայացուցիչների մէջ, պնդում է նա, չի երևում իրարից որոշուած կազմութիւն, նոքա չունին շենքով իրարից տարբեր գործարաններ. իսկ եթէ գիտնականները նոցա մէջ նկատած գունաւորութեանը և բժերի նկարին մեծ կարևորութիւն են տալիս, ադոնք խիստ երկրորդական, անսաղյու և փոփոխական նշաններ են, որոնք շատ անգամ կախում ունին տարուայ եղանակից և կենդանու սեռից. Աւրեմն պէտք է որոշել Salmo ազգի ոչ թէ զանազան տեսակները, այլ միայն նոյն և մի ընդհանուր ձեր շատ կամ քիչ կայուն պէսպիսութիւնները. — Հետեւեալ հատոր կը բովանդակէ կովկասեան ծածանները. — Հետեւեալ հատոր կը բովանդակէ կովկասեան ծածանները (Oyprinidae).

Ս. Մ.

—*—

Թագաւոր կայսրն, այս տարուայ մարտի 26-ին, հաստատել է մինիստրների կոմիտետի օրագիրը, որ հիմնուած է ամենահպատակ՝ 1) Կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետի 1897 թուի զեկուցազրի և

2) Բագուի, Քութայիսի, Թիֆլիսի և Երևանի նահանգների ու Կարսի շրջանի դրութեան մասին 1897 թ. հաշիւների վրայ և որով կարգադրուած է:

I Թոյլ տալ կովկասի սահմաններից մուլքիա վերադառնալ, առանց պահպաններու մաքսային ձեւականութիւնները, այլ միայն տեղական ոստիկանութեան գլխաւորների վկայազբարով՝ թուրքահպատակ հայ գաղթականներից նրանց, որոնք ցանկութիւն կը յայտնեն օգտուիլ յիշեալ թոյլտուութիւնից.

II Տալ իրաւունք կովկասի քաղաքացիական մասի կառավարչապետին՝ 1) սոյն Բարձրագոյն հաւանութեան օրից մի տարուայ ընթացքում հեռացնել իրեն յանձնուած երկրի սահմաններից բոլոր թրքահպատակ հայ գաղթականներին, որոնք ցանկութիւն չեն յայտնի օգտուիլ մինիստրների կոմիտետի ներկայ օրոշման 1 կէտով սահմանած թոյլտուութիւնից՝ տալով կարօտեալներին ըստ իւր հայեցողութեան՝ ճանապարհածախս նրանց համար հաւաքած նուերներից և 2) յայտարարել այս մասին անյապաղ ընդհանրութեան դիտութեան համար:

+ + + + +

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ.

Դաւրէժում կազմուած է Հասրանական Ընկերութիւն, որ Դաւրիժարնակ հայոց մըտաւորական և բարոյական զարգացման նպաստելու նպատակաւ երկու շաբաթը մի անդամ տալիս է հասարակական յէ դասախոսութիւններ:

Ընկերութեան Վարչութիւնը ներկայ գրքութեամբ զիմում է յառաջազիմասէր հայ հեղինակներին, թարգմանիչներին և հրատարակիչներին, և խնդրում որ համին քաջալերել և օժանդակել այս բարենպատակ ձեռնարկին, նուիրելով իրանց հրատարակութիւններից մի մի օրինակ, մանաւանդ Դիտական, Առողջապահական, Մանկավարժական և Պատմական երկեր:


Ծնորհակալութեամբ ընդունվում է նաև ազնիւ. հայ հասարակութիւնից նուիրված ու է զիբը կամ փող:

Հաճեցէք մեր այս գրութեան մի անկիւն
շնորհել Ձեր պատուական թերթում և ըն-
դունել մեր շնորհակալիքն:

Նույնագուն Վարչութեան
Գոկուր Կ. Յ. ՓԱՇԱՑԵԱՆ

Պահանջն ընկերութեան մակ ապահով հասցէն է.

Salle de Conférence Armenienne
Tauris - (Perse)



Ստացել ենք՝ Նոր Նախիջեանի և շրջակայ
վեց գիւղօրէից երկու տարիէ և վեր գյութիւն
ունեցող «Հոգեօրականաց Հայոց Խնամարկութեան»
հաշիւը՝ անցեալ 1897 թ.-ի համար օրից երեսում
է. Խնամարկութիւնն ունեցել է մայր գումար իւր
տոկոսեաք՝ 1655 թ. 44 կ. մուտ 993 թ. 75 կ.
և 453 թ. 41 կ. այսպիսամ ներկայ թ.-ի սկզբում
գոյացած գումարն է 2195թ. 78 կ. Ենցեալ տարի
Խնամակալութիւնը նպաստ է բաշխել. կշր նիկո-
ղայոս քահ. Քոնսակեանին տարեկան թոշակ 300 թ.
հիւանդ Մովսէս քահ. Զարիֆեանին երկք ամսուայ
համար. 45 թ. Նիկողայոս դպ. Կարապետեանի
թալման միանուագ 50 թ. Նորա այրուն 15 թ. գի-
ւանական ծախք 43 թ. 41 կ.—Ըստ ամենայնի
համակրելի և քաջալերութեան արժանի մի ձեռ-
նարկութիւն, որից ցանկալի էր օրինակ առնեին
նաև ուրիշ տեղերի հոգեստրականներ:

Մեզ ուղարկած Նոր—Նախիջեանի Քարեգոր-
ծական Ընկերութեան 1897 թ.-ի հաշուից երեսում
է, որ Ընկ.-ը տարուայ սկզբին դրամագլուխն է ու-
նեցել 65,214 թ. 69 կ. մուտք. 5024 թ. 96 կ. և
ծախք՝ 4914 թ. 41 կ., որով ներկայ թուականի
սկզբին դրամագլուխը եղել է 65,325 թ. 24 կ.
Ընկերութեան ծախքը մեծ մասամբ գլացներում
սաներ պահելու համար է, որոնց ուսման վարձ
վճարուած է անցեալ տարի 809 թ. 33 կ. հանդեր-
ձեղինաց և ուսումն. պիտուից գին՝ 2840 թ. 71 կ.
ներկայ տարուայ համար ի նկատի առնուած ար-
տաքարդի ձեռնարկութիւնն է Թեմական Դր-
պրանոցի շինութեան վերայ երբորդ յարկ աւելա-
ցնելու խնդիրը մշակել և գործադրել:



ԳՐԱԼԻՍՈՒԱԼԻԹԻՒՆ.

I.

Ն. ՄԱԼ. ԳԵՂԱՐՔՈՒԹԻՒՆ. «Դ. ՏԵՐ ՄԿՐՏՉԵԱՆ»
(ՄԻԱԲԱՆ) ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ԱԼԵԽԻՆԻՇԵՐԻՑ ՅԱՇԱՏԱԿ
ԴԱՏԱԿԱՆՔԱՑ ԳՈՐԻԾ. ԵՒ ՇՄՈՒ ՎԱՐԱՑ, ՈՐ ՎԿԱՅԵ-
ՑԻՆ ՑՈՒՌՃԱԿ».*

Տէր-Մկրտչեանի փոքրիկ և ընափիր աշ-
խատութիւնը արգէն ծանօթ է Արարատի
ընթերցողներին. անկասկած նոքա յիշումեն,
որ հրատարակիչը իւր ընդպարձակ յառաջա-
րանի մէջ եկել է այն եզրակացութեան, թէ
իւր հրատարակած վկայութիւնը «գրապէս
**լուծում է» (Էջ 5) Ագաթանգեղոսի պատ-
մութեան գրութեան ժամանակի և լեզուի
խնդիրը: Ասորերէն վկայաբանութիւնը չորրորդ
դարու մի ճշմարտապատում գործ է, Ագա-
թանգեղոսը մի անվաւերացիր է. երկուսի մէջ
կան «տառացի նմանութիւններ», փոխի է ա-
ռել երկրորդը վարքի հայերէն թարգմանու-
թիւնից, որը կատարուել է «մօտաւորապէս
Եղարի երկրորդ կամ առ առաւելն երրորդ
քառորդում» (Էջ 30), իսկ Ագաթանգեղոսի
Խմբագիրն է Կորիւնը. սա և Ագաթանգեղոս
«միւնիցն անձնաւորութիւնն են» (Էջ 17—18):**

Պր. Մառը իւր քննութեան մէջ համաձայն
չէ վերայիշեալ կարծիքների հետ և հարցնումէ.
ի՞նչի մէջն է Ագաթանգեղոսի պատմութեան և
վկայաբանութեան նմանութիւնը, արգեօք
պատմութեան նիւթի: թէ առանձին հատուա-
ծական պատմութիւնների և կամ ամրող զր-
րուածքի ծրագրի մէջ, ոչ այլ համաձայնու-
թիւնը նկատուել է Գորիսա և Շմնի ու Լու-
սաւորշի չարչարանքների մէջ, հետեւապէս այն-
պիսի կտաբրում երբ չարչարուող սրբերը ընդ-
հանրապէս նոյն աղօթքներն են ասում շատ
անգամ նման տանջանքներով տանջւում: Նը-
ման մահով նահատակում: Եթէ ընդունուի
էլ, որ Ագաթանգեղոսը իսկապէս օգտուել է
վարքից,—մանաւանդ Տէր Մկրտչեանի բաղդա-

* (Արարատ 1896 թ. 385—392 և 425—440,
արտասան Վաղարշապատ 1896 թ.) իսկ պրոֆեսորի յօ-
դուածը լոյս է տեսլ „Վիզանտիոնակի Վրեմենու Ն 3
և 4, 1897 և.».